ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTER OF DEFENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

«20» 12 2014 թ.
ԴԿ/510-2222

ՀՀ արտաքին գործերի նախարար
Է.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար

"Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Ձեզ եմ ներկայացնում "Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2012թ. հոկտեմբերի 3-ի՝ "Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի մասին" արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին" արձանագրության նախագիծը և դրա կնքման նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկանքը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ Արձանագրության կնքման նպատակով անհրաժեշտ գործընթացները:

Առդիր՝ 1. Արձանագրության նախագիծը (հայերեն և ռուսերեն)՝ 7 թերթ:
2. ՀՀ ՊՆ տեղեկանքը՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Ս.ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ՊՆ ՊՔՎ միջազգային պայմանագրաիրավական ապահովման բաժին
կատ. փ/գ-տ Ի.Բաղդասարյան, հեռ. 294529, 294521:

Հայաստանի Հանրապետություն
Արտաքին գործերի նախարարություն
Մուտքագրված է
12037
«22» DEC 2014

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багревандa 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12
Yerevan city, 0044, Bagrevand 5, Phone: (+374 10) 29-44-01, Fax: (+374 10) 29-43-12

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

"Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2012 թվականի հոկտեմբերի 3-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի մասին արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 2 արձանագրության կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Դիտարկվող Արձանագրության նախագիծը մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, հիմնվելով ռուսական կողմի հետ Մոսկվայում 2014թ. կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում վերջնականապես ձեռք բերված համաձայնությունների և արդյունքների վրա: Նախագիծը կազմվել է ք.Գյումրու Լալայան փողոցում գտնվող և այժմ հնարավոր չափով գործող ռուսական եկեղեցու (1910թ. կառուցված) կիսաքանդ շինության զբաղեցրած տարածքի, ինչպես նաև այդտեղ հոգևոր մշակութային կենտրոնի կառուցման համար հողատարածքի տրամադրման նպատակով: Տրամադրման ենթակա հողատարածքը բաղկացած է ներկայումս չօգտագործվող հետևյալ երեք՝ 0,3812 հա, 0,1948 հա և 1.9 հա մասնաբաժին կազմող հողատարածքներից: Ռուսական կողմն այժմ օգտագործում է կիսաքանդ եկեղեցին այն իմաստով, որ այնտեղ երբեմն, հատուկ եկեղեցական ծիսական օրերին իրականացվում է հոգևոր ծառայություն, մոմավառություն: Սակայն պատշաճ կերպով եկեղեցու շինությունն օգտագործելու համար կարիք կա իրականացնել հիմնովին վերանորոգման աշխատանքներ, ինչը հնարավոր չէ հիշյալ հողատարածքներն իրենց չպատկանելու պատճառով:

Ռուսական կողմը, մասնավորապես 102-րդ ռազմակայանն իր կողմից արդեն վերակառուցել է ք.Գյումրու Մեծ Բերդում գտնվող և Փառքի Բլուրում գտնվող երկու ռուսական եկեղեցի:

Նկատի ունենալով վերոնշյալը, համապատասխան հողատարածքների տրամադրման դեպքում ռուսական կողմին հնարավորություն կնձեռնվի վերանորոգել ևս մեկ ռուսական եկեղեցու հին և կիսաքանդ շինություն, ինչպես նաև

կառուցել հոգևոր մշակութային կենտրոն, ուր կարող են հետագայում այցելել ու հաճախել նաև ՀՀ քաղաքացիները:

Դիտարկվող Արձանագրության նախագծով վերոնշյալ նպատակով պլանավորվում է ռուսական կողմին տրամադրել հիշատակված հողատարածքը: Թիվ 2 Արձանագրությամբ կատարվող փոփոխությունների նպատակն է հստակեցնել և փաստացի վիճակին համապատասխանեցնել ՀՀ տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի ցանկը, ինչպես նաև իրավական հիմք ստեղծել նշված ռազմական ավանները և չօգտագործվող հողատարածքները սահմանված կարգով օգտագործելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել Թիվ 2 Արձանագրության կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս.ՕՀԱՆՅԱՆ